

Հավելված թիվ 6

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ Խորհրդի որոշմամբ
«20» ապրիլի 2011թ. թիվ 4 Արձանագրություն
Խորհրդի նիստին նախագահող

Դերգունովա Օ.Կ.



**2010 թվականի «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի
գործունեության նկարագիրը և ֆինանսական վերլուծությունը**

1. 2010թ գործունեության ֆինանսական վերլուծություն

2010 թ-ի ընթացքում ՎՏԲ Հայաստան Բանկ ՓԲԸ-ն կարողացել է հասնել իր առջև դրված նպատակներին և տարվա վերջում միջին կտրվածքով պահպանել շուկայում իր առաջատար դիրքերը՝ ակտիվային գործառնություններով: «ՎՏԲ-Հայաստան» Բանկ ՓԲԸ-ն պլանավորված կերպով դիվերսիֆիկացնում է իր ռեսուրսային բազան, բարելավում է ակտիվների կառուցվածքը, բարձրացնում է շահութաբերության մակարդակը, առաջարկվող ծառայությունների և պրոդուկտների որակը: Բանկի կողմից իրականացվող ներդրումային քաղաքականությունն ուղղված է ՀՀ տնտեսության կայուն զարգացման և հաստատուն գործունեության աջակցմանը:

2010թ.-ի ընթացքում «ՎՏԲ-Հայաստան» Բանկ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) ակտիվները ազգային արժույթով ավելացել են 7.3%-ով և կազմել են 127.5 մլրդ. ՀՀ դրամ: 2010թ. վերջի դրությամբ Բանկը գրավել է 4-րդ տեղը ՀՀ բանկային համակարգում համախառն ակտիվների գծով (շուկայի 8.1%):

Բանկի կողմից հաճախորդներին տրված վարկերի ծավալը աճել է մոտավորապես 21.1%-ով հասնելով մինչև 86.6 մլրդ. դրամ, կամ ընդհանուր ակտիվների 67.9%:

Իրավաբանական անձանց վարկային պորտֆելը (ներառյալ պահուստները) 2010թ.-ի վերջի դրությամբ կազմել է 53.3 մլրդ. դրամ: 2009թ. նկատմամբ աճը կազմել է 9.8% կամ 4.8 մլրդ. դրամ: Արդյունքում Բանկը գրավել է 4-րդ տեղը ՀՀ բանկային համակարգում իրավաբանական անձանց վարկային պորտֆելի ծավալով: Բանկին բաժին է ընկնում ՀՀ Բանկային համակարգի իրավաբանական անձանց վարկային պորտֆելի մոտ 8.3%:

Ֆիզիկական անձանց վարկային պորտֆելը 2010թ. վերջի դրությամբ կազմել է 33.3 մլրդ. դրամ: 2009թ. նկատմամբ աճել է 44.9%-ով կամ 10.3 մլրդ. դրամով: Բանկը գրավում էր 2-րդ տեղը ՀՀ բանկային համակարգում ֆիզիկական անձանց վարկային պորտֆելի ծավալով: Բանկին բաժին է ընկնում ՀՀ Բանկային համակարգի ֆիզիկական անձանց վարկային պորտֆելի մոտ 10.5%:

Արժեթղթերի պորտֆելը 2010թ. վերջի դրությամբ կազմել է 10.5 մլրդ. դրամ: Տվյալ ցուցանիշը 2009թ. համապատասխան ցուցանիշի նկատմամբ աճել է 15.2%-ով կամ 1.4 մլրդ. դրամով:

Բանկի ընդհանուր պարտավորությունները, որոնք պարունակում են ժամկետային և ցայտակարգ միջոցներից, ինչպես նաև ներգրավված ներքին և արտաքին շուկաներից, աճել են 4.5%-ով. հասնելով 98.1 մլրդ. դրամ:

Իրավաբանական անձանցից ներգրավված միջոցները կազմել են մոտ 22 մլրդ. դրամ: 2010թ. արդյունքում ֆիզիկական անձանց կողմից ներգրավված միջոցները կազմել են 36.5 մլրդ. դրամ: 2009թ. նկատմամբ նույն ցուցանիշի աճը կազմել է 61.1% կամ 13.8 մլրդ. դրամ: Ըստ ֆիզիկական անձանց միջոցների ծավալների՝ 2010 թ. տվյալներով Բանկը զբաղեցնում է 3-րդ տեղը:

Բանկերից ներգրավված միջոցները կազմել են Բանկի պարտավորությունների 31.7% կամ 31.1 մլրդ. դրամ: 2009թ. համեմատությամբ նույն ֆինանսական ցուցանիշը նվազել է 14.7%-ով կամ 5.4 մլրդ. դրամով:

2010թ. Բանկի կապիտալը կազմել է գրեթե 29.3 մլրդ. դրամ՝ ավելանալով 2009թ. համապատասխան ցուցանիշի նկատմամբ 4.3 մլրդ. դրամով:

Բանկի հիմնական գործունեությունից ստացված եկամուտը 2010թ. աճել է 85.8%-ով և կազմել 11,0 մլրդ. դրամ: Վարչա-կառավարչական ծախսերը կազմել են 5.4 մլրդ. դրամ: 2009թ. նկատմամբ նկատվել է այդ ծախսերի՝ մոտ 0.8 մլրդ. դրամի կամ 17.9% աճ:

2010թ. զուտ շահույթը հարկումից հետո կազմել է 4.4 մլրդ. դրամ: Կուտակված շահույթի կշիռը ընդհանուր կապիտալում կազմում է 41%:

2010թ. ROA-ն կազմել է 3.6%, ROE-ն՝ 15.9%, իսկ CIR-ը՝ 51.2%:

2010թ. ընթացքում Բանկը ընդհանուր առմամբ բավարարել է ՀՀ ԿԲ կողմից պահանջվող հիմնական տնտեսական նորմատիվների պահանջներին:

2. Բանկի 2010թ. գործունեության նկարագիրը

Ներդրումային գործունեության զարգացման և ներդրման շրջանակներում «ՎՏԲ Բանկ (Հայաստան)» ՓԲԸ համար կարևոր իրադարձություն էր ՀՀ Պետական (գանձապետական) միջնաժամկետ և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի շուկայում Գործակալի կարգավիճակ ստանալը:

«ՎՏԲ Բանկ (Հայաստան)» ՓԲԸ-ն ընդգրկվել էր երեք առաջատարների շարքում պետական պարտատոմսերի բորսային գործարքների գծով և ներկայացվել պարզևատրման՝ որպես «Պետական պարտատոմսերի շուկայի լավագույն մասնակից» «NASDAQ OMX Հայաստան» ֆոնդային բորսայի կողմից հայտարարված մրցություն:

2010 թ-ին Բանկը սկսել է բոլոր վարկային բեք-օֆիսային գործառույթների կենտրոնացումը Գլխամասային գրասենյակում, այդպիսով մասնաճյուղերի վրա հիմնականում թողնելով բանկային պրոդուկտների վաճառքի գուրծառույթը: 2010թ. «ՎՏԲ Բանկ (Հայաստան)» ՓԲԸ-ն բացել է կենտրոնացված վարկային բեք-օֆիս մանրածախ սեզմենտի հաճախորդների համար: Դա նշանակում է, որ բոլոր վարկային պայմանագրերը, բացառությամբ ոսկյա իրերի գրավադրմամբ տրամադրվող վարկերի, կկազմվեն տվյալ ստորաբաժանման կողմից, իսկ Երևանում Բանկի հաճախորդները կունենան հնարավորություն վերոնշյալ հասցեում ստորագրել պայմանագրեր և տեղում ստանալ նոտարի վավերացումը:

2010թ-ի նոյեմբերի 15-ից «ՎՏԲ Բանկ (Հայաստան)» ՓԲԸ-ն ֆիզիկական անձանց առաջարկում է նոր պրոդուկտ՝ վարկային քարտեր VISA Classic credit և Visa Gold credit, որոնք մեծ պահանջարկ են վայելում բանկային ծառայությունների շուկայում:

2010 թ-ին ստեղծվեց նոր կորպորատիվ ինտերնետ-կայք «ՎՏԲ Բանկ (Հայաստան)»: Ելնելով ՎՏԲ Խմբի ինֆորմացիոն ռեսուրսների զարգացման ռազմավարությունից՝ թարմացված «ՎՏԲ Բանկ Հայաստանում» կայքը ձևավորվել է խմբին բնորոշ ոճով հաշվի առնելով հայկական շուկայի պահանջները:

Նախորդ տարվա արդյունքներով «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն ճանաչվել է որպես լավագույնը ֆինանսական հաշտարարի գրասենյակի հետ համագործակցության տեսանկյունից: Այդ գնահատականը հաստատված է «Լավագույն համագործակցող բանկ» հավաստագրով, որը տրվել է «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ին:

Բանկի գործունեության մեջ իրականացվել են մի շարք ձևափոխություններ՝ ինչպես հաճախորդների սպասարկման, այնպես նաև բիզնեսի զարգացման և ռիսկերի գնահատման առումով:

2010թ.-ի ընթացքում «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ն շարունակել է ակտիվ զարգացումը մանրածախ բիզնեսի տարբեր ոլորտներում և պահպանել է ՀՀ-ում բնակչության մանրածախ սպասարկման գծով առաջատար դիրքերից մեկը:

2010թ.-ին մանրածախ բիզնեսում Բանկի աշխատանքն ուղղված է եղել ոչ միայն ավանդային և վարկային պորտֆելների, ինչպես նաև զանազան մանրածախ ծառայությունների արդյունավետության բարձրացմանը, այլ առաջին հերթին մանրածախ ծառայությունների, վաճառքի այլընտրանքային ուղիների զարգացմանը, որոնք թույլ են տալիս էականորեն պարզեցնել և տնտեսել ժամանակը հաճախորդների սպասարկման առումով:

Բանկում հաշվետու ժամանակաշրջանում, շնորհիվ իրականացվող ավանդային քաղաքականության, ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային ավանդների գումարը կազմել է 28.5 մլրդ. դրամ:

2010թ.-ի ընթացքում Բանկը պարբերաբար վերանայել է ժամկետային ավանդների պայմանները՝ հիմնվելով ավանդատուների պահանջների և շուկայի զարգացման միտումների ուսումնասիրությունից, որի հետ կապված 2010թ.-ի ընթացքում որոշակի տեսակի ավանդների տոկոսադրույքները նվազել են 1%-ով. 2010թ.-ի ընթացքում ֆիզիկական անձանցից ներգրավված միջոցների տոկոսադրույքը կազմել է տարեկան 9.7%:

Այսօրվա դրությամբ Բանկը առաջարկում է 6 տեսակի ժամկետային ավանդներ՝ «ՎՏԲ-Դրամային», «ՎՏԲ-Հարմարավետ», «ՎՏԲ-Սոցիալական», «ՎՏԲ-Հեռանկար+», «ՎՏԲ-Նպատակային» և «ՎՏԲ-Մանկություն»:

2010թ.-ի արդյունքներով Բանկը գրավել է երրորդ տեղը բացառապես Visa քարտերի թողարկման և սպասարկման առումով, որի արդյունքում ամրապնդվել է բանկային համակարգում Բանկի կարևորագույն դիրքը: 2010թ.-ի վերջում Բանկի ակտիվ քարտերի քանակը հասել է մինչև 91հազ. հատ՝ աճելով 43%:

Ներկայումս Բանկը համագործակցում է «Բիստրայա պոչտա», «Ինտերէքսպրես», «Անելիք», «Միգոմ», «Մանիգրամ», «Բլիզկո» դրամային փոխանցումների համակարգերի հետ: 2010թ.-ի ընթացքում Բանկի մասնաճյուղային ցանցի միջոցով իրականացվել է ավելի քան 146հազ. փոխանցումներ՝ ավելի քան 26.6 մլրդ. դրամ:

2010թ.-ի ընթացքում Բանկի կողմից ներդրվել են ֆիզիկական անձանց նոր վարկատեսակներ՝ հաստատման և վաճառքի միանգամայն նոր տեխնոլոգիաներով: Ներդրվել են այնպիսի նոր վարկատեսակներ, ինչպիսիք են «Քարտ Ունիվերսալ» վարկային քարտը, «Ունիվերսալ վարկ» սպառողական վարկը, անշարժ կամ շարժական գույքի գրավադրմամբ

օվերդրաֆտը: Վերանայվել են վարկերի տրամադրման վերաբերյալ որոշումների ընդունման ժամկետները:

2010թ.-ի ընթացքում «Բնակարան երիտասարդներին» պետական ծրագրի շրջանակներում ներդրվել է երիտասարդ ընտանիքների առավել մատչելի տոկոսադրույքներով վարկավորումը:

Կատարելագործվել են հիպոթեքային վարկերի տրամադրման պայմանները, մասնավորապես, վարկերի ժամկետները երկարաձգվել են մինչև 35 տարի, իսկ տրամադրումը՝ մինչև 6 օրվա ընթացքում:

Վերանշակվել են շինարարական կազմակերպությունների հիպոթեքային վարկերի տրամադրման ծրագրերը:

Ընդլայնելով ռազմավարական համագործակցության շրջանակները՝ «ՎՏԲ-Յայաստան Բանկ» ՓԲԸ-ն գրանցվել է որպես «Ինգո Արմենիա» և «Ռոսգոսստրախ Յայաստան» ապահովագրական ընկերությունների ապահովագրական գործակալներ և իրականացրել է ապահովագրական պոլիսների վաճառք: Բանկը առաջարկում է ապահովագրական պոլիսների ամբողջական փաթեթ, ներառյալ դժբախտ պատահարներից, ավտոտրանսպորտային միջոցների և անշարժ գույքի ապահովագրումը:

2010թ.-ի վերջի դրությամբ Բանկի ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների ընդհանուր քանակը կազմել է 250 հազ., իսկ իրավաբանական անձանց քանակը՝ 5.5 հազ.:

Ռիսկերի կառավարման համակարգի կատարելագործումը

Բանկի կայունության կարևոր գործոններից է հանդիսանում ռիսկերի կառավարման ուժեղ և հստակ համակարգի առկայությունը: Բանկը կազմել է ռիսկերի կառավարման համակարգ՝ առաջնորդվելով ռիսկերի կառավարման միջազգային սկզբունքներով, ըստ որի նախատեսված են համակարգված բազմակողմանի մոտեցումների կիրառում հիմնական բանկային ռիսկերի նույնականացման, գնահատման և վերահսկման համար: Ռիսկերի կառավարման գործընթացն ունի առանցքային դեր Բանկի կայուն եկամտաբերության աջակցման համար: Յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում սեփական գործունեության ռիսկի համար:

Հիմնական բանկային ռիսկերը, որոնք կրում է Բանկը, հանդիսանում են՝ վարկային ռիսկը, իրացվելիության ռիսկը, շուկայական ռիսկերը՝ ներառյալ արժույթային և տոկոսադրույքի ռիսկերը, ինչպես նաև գործառնական ռիսկը:

Վարկային ռիսկ

Բանկում գործող վարկավորման գործընթացը և վարկային ռիսկերի կառավարման համակարգը ապահովում են ազգային վերահսկող և կարգավորող մարմինների կողմից պահանջների բավարարումը:

Մասնավորապես բավարարում են այնպիսի պահանջների կատարում, ինչպիսիք են՝

-վարկավորման գործընթացում ստորաբաժանումների գործառնությունների բաշխում. հաճախորդների վարկավորման ստորաբաժանումների և հաշվառու ու վերահսկողություն իրականացնող ստորաբաժանումների միջև շահերի բախման բացառում,

-վարկային որոշումների ընդունման համար կառավարման մարմինների/պաշտոնատար անձանց լիազորությունների և պատասխանատվությունների բաշխում՝ սահմանելով լիազորությունների հետևյալ սահմանները. խոշոր, երկարաժամկետ և ոչ ստանդարտ

գործառնությունների նկատմամբ կոլեգիալ որոշումների ընդունումը, որոշումների ընդունման ընթացքում շահագրգռվածության նկատմամբ վերահսկողությունը,

-ռիսկերի վերլուծության տեսանկյունից վարկային հայտերի ուսումնասիրման համար հատուկ (անկախ) ստորաբաժանման առկայությունը,

-վարկային քաղաքականության ձևն արտացոլում է հիմնական հարցերի ցանկը և դրանց ընթացակարգերի սկզբունքները:

-ձևավորված է Վարկային ռիսկերի կոմիտե

Լիազորությունների վերաբաշխման համակարգ

Վարկային գործառնությունների իրականացման և վարկային ռիսկերի կառավարման նպատակով օպերատիվ որոշումների ընդունման համար Բանկում առկա է լիազորությունների վերաբաշխման համակարգ, որն իրենից ներկայացնում է Բանկի լիազորված մարմինների/պաշտոնատար անձանց համապատասխան ուղղահայաց բաշխումը:

Լիազորությունների շրջանակները որոշվում են սահմանաչափերով, որոնք սահմանափակում են վարկային ռիսկերի ծավալները՝ ընդունված ՎՏԲ-Հայաստան Բանկի կառավարման տարբեր մակարդակների լիազորված մարմինների/պաշտոնավոր անձանց որոշումների հիման վրա:

ՎՏԲ-Հայաստան Բանկի լիազորությունների վերաբաշխման համակարգի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Աղյուսակ 1-ում.

Լիազորված անձ/մարմին անվանումը	Լիազորությունների մակարդակը և էական պարամետրերի նկարագրում/դրանց տրամադրման պայմանները:
Տնօրինություն	Բանկի Տնօրինությունը ընդունում է վարկավորման որոշում Բանկի սեփական կապիտալի 10%-ը գերազանցող գումարի չափով և վերակառուցումներ (Վարկային կոմիտեի լիազորություններից վեր): Առանձին որոշումներով Տնօրինությունը կարող է վերանայել վարկավորման պարամետրերը, մասնավորապես գնային պայմանները՝ ելնելով հաճախորդի առանձնահատկություններից, տնտեսական գործունեության կարևորությունից և իրավիճակից, որոնք Բանկի համար ունեն կակոր նշանակություն:
Բանկի վարկային կոմիտե	Վարկային կոմիտեն իրավունք ունի կայացնել որոշում տրամադրել վարկ Բանկի հաճախորդներին ոչ ավել, քան Բանկի սեփական կապիտալի 10%-ը: Բացի այդ վարկային կոմիտեն որոշումներ է ընդունում փոքր վարկային կոմիտեի սահմանափակումների վերաբերյալ:
Փոքր վարկային կոմիտե	Փոքր վարկային կոմիտեն իրավունք ունի վարկերի տրամադրման որոշում ընդունել վարկային կոմիտեի կողմից սահմանված լիազորությունների շրջանակում:
Ռիսկ մենեջեր	Ռիսկ մենեջերն իրավունք ունի վարկերի տրամադրման որոշում ընդունել համաձայն Գլխավոր Տնօրեն-Տնօրինության Նախագահի հրամանով սահմանված լիազորությունների շրջանակում:

Իրացվելիության ռիսկ

2010 -ին մշակվել և ընդունվել է իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունը: Տվյալ քաղաքականությունը ստեղծում է անհրաժեշտ բազա ՀՀ ԿԲ պահանջների կատարման ինչպես Բանկի հետ կապված, այնպես էլ չկապված անձանցից նեգրված միջոցների մասով:

2010 թ-ին սկսվել է իրացվելիության ռիսկի կառավարման ավտոմատացման և մոդելի ներդրման գործընթացը, որի հիման վրա կարելի է վերլուծել ինչպես ընթացիկ, այնպես էլ իրացվելիության կանխատեսվող իրավիճակը:

Դրա հետ մեկտեղ ռիսկի գնահատականն իրականացվում է օրական՝ ընթացիկ և ընդհանուր իրացվելիության գործակցի հաշվարկման ճանապարհով, ինչպես նաև եռամսյակային՝ Բանկի Տնօրինության դիտարկմանը ռիսկերի վերլուծության հաշվետվությունների շրջանակներում:

Շուկայական ռիսկ

2010 թ-ին սկսվել է արտարժույթի ռիսկի կառավարման կարգի մշակման և ներդրման գործընթացը:

Կարգում բերված է ինչպես ՀՀ ԿԲ կողմից առաջարկված արտարժույթի ռիսկի կառավարման մեթոդներ, ինչպիսին է ՎԱՌ մեթոդը, որը հաշվարկում է օրական կտրվածքով և ներկայացվում է

Բանկի Տնօրինության դիտարկմանը ռիսկերի վերլուծության հաշվետվությունների շրջանակներում եռամսյակային կտրվածքով, այնպես էլ արտարժույթի ռիսկի հաշվարկման նոր մոտեցումներ, մասնավորապես արժույթի հաշվեկշռի կառուցվածքի կտրուկ փոփոխության ենթադրության հիման վրա:

Տոկոսային ռիսկը Բանկում գնահատվում է եկամտաբերության կորի զուգահեռ շեղման ենթադրության հիման վրա: Եռամսյակային կտրվածքով հաշվարկվում է դյուրացիայի խզումը:

Գործառնական ռիսկ

Բանկում գործառնական ռիսկերի կառավարման գործընթացը բաղկացած է նմանարկման 4 փուլից և հաջորդող մոնիտորինգից: Բանկի բոլոր աշխատակիցները մասնակցում են նմանարկման և օպերացիոն ռեպերի տեղեկատվության փոխանցման գործընթացին՝ համաձայն ներբանկային փաստաթղթերի, ինչպես նաև 2010թ-ին հաստատված գործառնական ռեպերի բացահայտման մեթոդիկայի: Այնուհետև գործառնական ռեպերը գնահատվում են գործառնական ռիսկերի բազայում, որից հետո պատասխանատու աշխատակիցը կազմում է հանձնարարական դրանց հետագա վերացմանը:

Մասնաճյուղային գանգ

Առ 31.12.2010թ. մասնաճյուղային ցանցը բաղկացած է 68 մասնաճյուղերից:

2009-10 թթ. ընթացքում ամբողջ ցանցում հաջող կերպով ներդրվել է «վաճառքի մոդել», որից հետո ամբողջ ցանցը սկսել է իրականացնել սպասարկման նոր մակարդակին և հաճախորդներին տրամադաված ծառայություններին ուղղված ավելի հարմարավետ գործառնություններ: Գործող և նոր ներգրավված հաճախորդների համար մշակվել և փորձարկվել են նոր տեխնոլոգիաներ և վաճառքի գործիքներ: Վաճառքի ակտիվացումն իրագործելու համար մշակվել են նաև «Կրոս վաճառք»-ի և «կորպորատիվ վաճառք»-ի մեթոդներ:

Ելնելով Բանկի ստրատեգիական նպատակներից՝ ներդրվել են մի շարք հարմարավետ վարկային պրոդուկտներ հաճախորդների լայն շրջանակների համար: Կապված նոր ներդրվող պրոդուկտների ավելի ճիշտ վաճառքի հետ մասնաճյուղային ցանցի աշխատակիցների հետ պարբերաբար անցկացվում են դասընթացներ:

2010թ. շարունակվել է իրականացվել է մասնաճյուղային ցանցի օպտիմալացման գործընթացը, որի շրջանակներում բարելավվել են որոշ մասնաճյուղերի պայմանները և դարձել են ՎՏԲ բրենդին համապատասխան: Մասնավորապես գործունեության վայրի փոփոխություն, վերանորոգում, կահավորում:

Անձնակազմի հետ աշխատանքներ

Առ 31.12.2010թ. Բանկում աշխատել է 867 աշխատակից:

Բանկում իրականացվում են միջոցառումներ՝ երիտասարդ հեռանկարային կադրեր ներգրավելու նպատակով: Աշխատանքի ընդունման ժամանակ ազատ հաստիքի թեկնածուների հետ անցկացվում են թեստավորում և մասնագիտական հարցազրույց: Բացի դրանից Բանկը սերտ համագործակցում է ՀՀ մասնագիտացված համալսարանների հետ, ունի ուսուցման կենտրոն, որտեղ պարբերաբար անց են կացվում անձնակազմի որակավորման

2010 թվականի ընթացքում տեղի է ունեցել Բանկի Գլխամասի աշխատակիցների մասնագիտական որակավորման ստուգում: Որակավորման արդյունքների հիման վրա բացահայտվեց աշխատակիցներին ուսուցանելու անհրաժեշտությունը, որն արտացոլվեց 2011 թվականի ուսուցման պլանների վրա, ինչպես նաև ընդունվել էին որոշումներ՝ աշխատակիցների զբաղեցրած պաշտոնների համապատասխանության վերաբերյալ:

2010 թ-ի ընթացքում տարվել են ակտիվ աշխատանքներ անձնակազմի հետ, ինչը պայմանավորված է մասնաճյուղային ցանցի նոր սպասարկման ստանդարտների անցմամբ (դասընթացներ, ուսուցում, նոր աշխատակիցների ներգրավում): Զուգահեռ, Բանկի մասնաճյուղերում հաջող ներմուծվում է մասնաճյուղային ցանցի աշխատակիցների խրախուսման համակարգը, որը արտահայտվում է ինչպես մասնաճյուղերի բիզնես պլանների կատարման, այնպես էլ աշխատակիցների անհատական ձեռք բերումներում:

Բանկի ուժեղ կողմերն են՝

-կորպորատիվ բիզնեսում ամուր դիրքը, համագործակցություն ԶՀ հիմնական ընկերությունների հետ (հեռահաղորդացման, էներգետիկ, ենթակառուցվածքային ընկերությունների և այլն);

-հնավորություն մասնակցելու ներմուծման և արտահանման գործառնությունների առևտրային ֆինանսավորման գործարքներում, այդ թվում առևտրի աջակցմանը EBRD ծրագրով, ինչը հնարավորություն է տալիս կորպորատիվ հաճախորդներին ֆինանսավորել էլ ավելի մրցակցային պայմաններով քան գործում են ԶՀ ներքին շուկայում;

-մեծ հնարավորություններ փաստաթղթային և երաշխիքային բիզնեսի զարգացմանը՝ օգտագործելով ՎՏԲ հսկի բանկերի սահմանաչափերը և TFP EBRD ծրագիրը;

-Բանկի միակ բաժնետիրոջ՝ ՎՏԲ բանկ ԲԲԸ և նրա դուստր բանկերի՝ աշխարհի և ԱՊՀ երկրիների աջակցության շնորհիվ միջազգային միջբանկային շուկաներում մուտքի հնավորության ձեռք բերում;

-մանրածախ բիզնեսի նշանակալից փայամասնակցությունը Երևանում և մի շարք տարածքային վաճառակետերում;

-լայն մասնաճյուղային ցանցը ամբողջ երկրում;

-VIP բիզնեսի – կորպորատիվ մասնաճյուղի առկայությունը և զարգացումը;

-Գործուն կենտրոնացված ցանցային և հեռահաղորդակցության համակարգ, որն ապահովում է Բանկի ԱԲՀ-ի աշխատունակությունը ժամանակի իրական ռեժիմով;

-ԶՀ տարածքում գործող ռուսական ընկերությունների մեծամասնության սպասարկումը:

«ՎՏԲ-Ֆայաստան Բանկ» ՓԲԸ Խորհրդի անդամ

Ա.Վ.Յաշնիկ

«ՎՏԲ-Ֆայաստան Բանկ» ՓԲԸ
Խորհրդի նիստի Նախագահող

Օ.Կ.Դերզունովա